

է երկիր, թերևս պիտի դադրէին զայն մաս մաս բաժնել: Խաղաղութիւնն պիտի տիրէր յաշխարհի, ընկերական հարստութիւնն պիտի յաղորդէր կործանիչ ամօճալի և ամբարշտ գինուորական յիմարութեան, քաղաքական բաժանմունք պիտի Գնուէին, և մարդիկ այն ատեն միայն պիտի կարենային բարձրանալ քաղաքաբար յուսումն տիեզերաց՝ մասնաշաղով իսկապէս բնութիւնը, և ապրիչ նաւարական կենաց գուարճութեամբ: Աւաղ. դեռ ևս այդչափի չեմք հասած. յուսանկարչական աչքն երկնային անասման խորհուրդներ պիտի յայտնէ՝ յուսալ քան մարդկային աչաց զիրան տեսնելը, և նախ քան զհասաստել զիտութեան իւր թագաւորութիւնը՝ այս մեր փորձիկ թաւալլոր բողոքակին վերայ:



ՕՐԱՅԻՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ



**Կ**ԱՒԻՏՈՒՆԻՈՅ Ս. Փրանկիսկոսի (S. Francisco) մէջ ամէն կողմ կը խօսուի օղային նաւու մի վրայ, որ մեկնելով անկից՝ դէպ ի վեր բարձրացեր է, առանց գիտցուելու թէ ո՞ր պիտի գնայ: Հարիւրաւոր ականաւ տես վկայք կը հաստատեն որ տեսեր են նաւը իրենց տանիքներուն վրայէն անցնելով, և մերձակայ գաւառներէ ալ տեղեկութիւն հասեր է՝ թէ տեսեր են այդ խորհրդաւոր նաւը՝ որ զարմանալի արագութեամբ օդը կտրելով կ'անցնէր:

Իսկ Սակրամենտոյ կղզիէն լուր եկած է՝ թէ հազարաւոր մարդիկ տեսեր են այդ նաւը, բայց այնքան բարձր ելած է՝ որ ոչ ոք կրցած է նկարագիր մը տալ անոր կազմակերպութեան:

Պիւսը հնարողին անունն դեռ յայտնի չէ, բայց նորա ներկայացուցիչն է Գէորգ Կոլէնս փաստաբանն, որ կը յայտարարէ՝ թէ իւր պաշտպանեալն պիտի չի յայտնէ ոչ իւր անունը և ոչ ալ նաւին կազմութեան մանրամասնութիւնները, մինչև որ բոլորովին ապահով չլինի իւր այս նոր գիւտին անվրէպ կերպով յաղորդուելուն վրայ: Վերոյիշեալ փաստաբանն ըսած է միայն, որ իւր պաշտպանեալն Մէյն գաւառէն է՝ միլիոններու տէր անձնաւորութիւն մի, որ երկար տարիներէ ի վեր հետամուտ եղած է օդային նա-

ւազանցութեան խնդրոյն, կէտ միլիոնէն աւելի փորձերու համար միայն ծախք ընելով. և թէ արդէն Վաշինգտոնի տէրութեան խնդրագիր տուեր է ասանձնա շնորհաբիւն (patente) ընդունելու համար, բայց քանի մը վճարական կէտերու մասին՝ այս վերջին փորձն ալ պահանջուեր է, ուսկից կախումն ունի գաւառյն յաղորդման: Փաստաբանին վեր ի վերոյ խօսքերուն նայելով՝ այս նաւս կազմուած է մետաղէ և կարող է 15 անձինք իւր մէջ ընդունել: Երկու թևնակներէ յառաջ կը մղուի, այնպիսի մեքենականութեամբ՝ որ նմանողութիւն է թռչնոց թևերուն, ունենալով նաև շարժական պոչ մի՝ ղեկի տեղ ծառայելու համար:

Հասարակաց աչքէն հեռու՝ առանձինն տեղույ մէջ՝ նախընթացաբար զանազան փորձեր եղած են, որոց ներկայ գտնուեր է վերոյիշեալ փաստաբանն, որ կը վկայէ թէ սքանչելի կերպով յաղորդ են այդ փորձերը, այնպէս որ նաւալարը կարող եղած է նաւուն ո՞ր և իցէ փափաքելի շարժումն տալ՝ թէ բարձրանալու, թէ՛ ցածնալու և թէ՛ ետևառաջ գնալու:

Կը սպասենք ուրեմն այս փորձին վերջնական արդիւնքին, փափաքելով տեսնել աւմենագոժտարանի տաւայրկներէն միոյն ալ լուծումն իրագործուած, առանց բանադատուելու ուրիշ անպաւնելու նման՝ այն ցանկին մէջ անցընել նաև խորհրդաւոր հնարողին անունը, ուր դրոշմուած են այնպիսիք՝ որոնք գահավիժելով՝ զոհ եղած են իրենց բարձացած գիւտին հասնելու փորձերով: \*\*\*



ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐՋԸ

Երբեմն երբեմն՝ մինչդեռ ամենևին չենք յուսար՝ ընկերութեան մէջ կը ծագին, իբրև յանկարծաբար սուռկեր յետ անձրևներու՝ այնպիսի անձինք, որք կամ իրենց գրքպանաց մէջ արծաթոյ քանակ մի հաւաքելու նպատակաւ, և կամ իրենց ուղղալային դրութեան և տգիտական կարծեաց ցուցահանդէս մի պարգեւու համար՝ ուսմիկ Հասարակութեան առջև, կը քարոզեն մեծածայր դէպ ի չորս կողմանս երկրի՝ թէ աշխարհու վերջը վերահաս է: Խեղճ ժողովորդն այդպիսի սնտիախօսից հաւատք ընծայելով՝ զուր տեղ էր խռովի և ինքզինքն աշուղտի խուճապներու կ'ենթարկէ:

Այս, հաւատքի մասն է և գիտութեան ալ համաձայն վարդապետութիւն է, թէ օր

մի աշխարհս պիտի վերջանայ, պիտի դա-  
դարի ներկայ վիճակիս դրից մէջ գտնուե-  
լեն, և մարդկային ցեղը պիտի շքամայ եր-  
կրիս երեսն. բայց այդ ի մարդկանէ գուր  
տեղ հետախուզուած որը՝ աշխարհիս շառ-  
տիչն հրատարակեց հանդիսապէս անդիսե-  
լի երկրայնոցս, հետաքրքիր հարցանողաց պա-  
տասխանելով՝ թէ «Ոչ է ձեզ գիտել գժամս  
և գժամանակս, գոր շայր եդ յիւրու՞ իշխա-  
նութեան» :

Այս ժամանակս Գաղղիոս և Գերմանիոյ  
աւստիին յուզման մէջ է, հաւատարով իրաւ-  
ցընէ որ աշխարհիս վերջն հասեր է : Գաղ-  
ղիացիք ամենահին մարգարէութիւն մ'ու-  
նին, որով աշխարհիս եղծուող մերձաւոր  
1897 տարւոյն մէջ կը նշանակէ, ըսելով.  
«Quand Georges Dieu crucifera, la fin  
du monde arrivera», այսինքն, «Երբոր  
Վերջը զԱստուած խաչէ, վերջ աշխարհիս  
վերահաս է» : Բայց թէ որ քիչ մ'ուշ զար-  
ձնելով խորհէին՝ թէ քանի մ'անգամ ար-  
դէն Աւագ Ուրբաթի օրն և Սուրբ Գէորգի  
սանն մի և նոյն օրը Հանդիպած են (Ձատի-  
կը 25 ապրիլի լինելով), և բնաւ արտաքոյ  
կարգի երևոյթ մի տեղի չէ ունեցեր, պիտի  
համոզուէին որ այդ ռամկական մարգարէու-  
թիւնս յիմարական է :

Իսկ Ռոբերտ Մայր գերմանացին՝ Հաւա-  
տելով որ 1899ին նոյեմբերի մէջ գիտաւոր  
աստղ մի զարնուելով երկրիս՝ երկիրս կտոր  
կտոր պիտի ցրուի, տաքցուցեր է տեւտու-  
նական խարտիչագոյն զուլնները : Իրաւ է՝  
որ երկիրս 1899ին նոյեմբեր 13ին ընդհա-  
րումս պիտի ունենայ Տեմպել գիտաւորին  
հետ. իրաւ է՝ որ Թուրք ասուպներու հրա-  
շայի անձրեանման անկում մի պիտի ակօ-  
ւծէ մեր մթնոլորտին հանգար և թափան-  
ցիկ սապարէզը, բայց բոլորովին սուտ է՝  
թէ այդ ընդհարումն երկրիս եղծման կամ  
քայքայման արդիւնքը պիտի ծնանի :

Ի սպասութենէ հին պազաց թալայայտ է,  
թէ գիտաւորաց երևումը գանազան դարե-  
բու մէջ ինչպիսի զարհուրանք ազդեր են  
անհաւատ և երկիրալից մարդկութեան վը-  
րած, մինչև ոմանք յիմարացած՝ իրենք զի-  
րենք սպաններ են : Թողլով անցելոյն հին  
յիշատակները նաև ներկայ դարուս մէջ ալ  
չատերը գիտաւորաց երևումնէն նախընթա-  
յաբար զարեքներ գուշակեցին, բայց հետե-  
ւանք չունեցան. այսպէս ալ կը հաւատանք  
որ անհետևանք պիտի մնան 1899ին համար  
գուշակուած աղէտը և արկածքը, և թէ այդ  
ընդհարումն շատ շատ ուրիշ արդիւնք յա-  
ռաջ չըբերէ՝ բայց եթէ մետէորական մարմնոց  
խիտ անձրև մի : Գիտաւորաց շրջանն այն-

քան անկանոն է՝ որ շատ կարելի է թէ  
ընդհարման շրջանի ժամանակ՝ ուրիշ ան-  
գամներու նման երկնային երկու մարմին-  
ներն իրարմէ միխրոնաւոր սապարէզներ հե-  
ռու գտնուին : Բայց համարելով իսկ որ ընդ-  
հարումն տեղի ունենայ, մենք բնաւ վտանգ  
պիտի չկրենք. որովհետև գիտաւորաց մար-  
մինն այնքան խիտ չէ, և շատ անգամ դի-  
տուեր է՝ որ գիտաւոր աստեղք Լուսընթագի  
դրութեան միջէն անցած ատեն՝ և ոչ իսկ  
նորս ամենափոքր արբանեկներուն վրայ այլ-  
այլութեան ո՞ր և իրէ հետք ստատուած չեն :

Աստեղագէտն Տիքստեր Հետեւեալ տողերը  
կը գրէ Յայրի բրած մարգարէութեանց վը-  
րայ. «Երբև հետևանք անխտհեմ, անհեղիշ  
և կամ գուցէ գուշակական իսկ բացատրու-  
թեանց, բաւական ժամանակն ՚ի վեր՝ կը  
տարածուի այն գաղափարն՝ որպէս թէ 1899  
տարւոյն մէջ աշխարհիս վերջը լինելու վտան-  
գին պիտի ենթարկուիք : Այդպիսի հաւատք  
մի, որ ներկայ գարուս մէջ արդէն երեք չորս  
անգամ տեղի ունեցեր է, այն իրականու-  
թեան վրայ կայացած է՝ որ 1899 տարւոյն  
մէջ երկիրս պիտի հանդիպի իւր շրջանին  
մէջ խուճք մի ըստ բաւականին խտացեալ  
երկնային մարմնոց, որք արեւուն չորս դին  
կը շրին 33 1/4 տարեաց ժամանակամիջոցի  
մէջ, այնպիսի կտրագծի մը վրայ՝ որ կը Հա-  
տանէ երկրիս իտալական շրջանակը : Այս  
հանդիպումն՝ եթէ չըսենք ամենահաւատար-  
գէթ ամենահաւանական է, և հանդիպած  
ժամանակն՝ ո՞ր ալ որ լինի՝ ծագումն պիտի  
տայ Թուիլ աստեղաց կամ ասուպներու Թու-  
թափման՝ խիտ անձրևի նման, և ոչ այլ ինչ :

«Վերջին անգամ որ այս հանդիպումս  
եղաւ 1866ին, տեքց նոյեմբերի 13-14-  
նոյնն հանդիպեր է նաև 1838ին, 1799ին,  
և այլն, և կանոնաւոր կերպով այդ ընդհա-  
րումն կարելի է տեղի ունեցած լինի նաև  
անցելոյն մէջ՝ եթէ Չինաց կամ ուրիշ հին  
ազգաց տարեգիրը քննելու լինինք, և բնա-  
երկրիս մակերևութին փնաս չէ տուած, այլ  
ժամանակին անձիւք հանդիսատես եղած են  
մեծ և վսեմ Հրախաղութեան մի տեսարա-  
նին, այսինքն՝ մի և նոյն ժամանակ հարիւ-  
րաւոր ասուպներու միանգամայն փայլելուն :

«Գիտաւորի մ'ամպլամածը կազմող փոք-  
րիկ մարմինները իրտով կ'եղծանին և մու-  
խիթ դը գառնան՝ իրենց զիւրարբորը ը-  
լալուն պատճառաւ, երբ կարգէ գուրս ե-  
րագուճեամբ կորեն մեր մթնոլորտին բար-  
ձրագոյն խաւերը : Այս երագուճիւնն է մէկ  
մանրերկրորդի մէջ մինչև 70 հազարամետր. որ  
է ըսել մէկ մանրերկրորդի մէջ այն փոքրիկ մար-  
միններէն իւրաքանչիւրը հաւասար միջոց

կընթանայ մեր ամենարագ շոգեկառաց մէկ ժամուան մէջ կարած ուղւոյն: Հետևաբար, անցելոյն հաստատական փորձերով կրնանք հետևցրել որ նմանօրինակ օգերևութի մը կրկնութիւնն չէ կարող փոքրիկ անգամ վընաս հասցընել մեր երկրացնտին:

« Ստոյգ է՝ որ բաց 'ի այն փոքրիկ մարմնիներէն՝ որոց հետ ընդհարումն ունեցաւ Երկրիս 1866ին նոյնմերի մէջ, նոյն մարմնոց թաւաման շրջանակի ընթացից վրայ կը գտնուի նաև վերոյիշեալ Տեմպել գիսաւորն (1866ին երևցածն). բայց այս վերջին տարեթուիս մէջ այդ գիսաւորն երկու ամիս վերջը կարեց Երկրիս շրջանակը, այսինքն 1867ին յունուարի մէջ, երբ Երկիրս արդէն քանի մը միլիոն հազարամետր հեռացած էր երկու շրջանակաց զիրար հասանող կէտէն. իսկ 1899ին՝ երբ վերոյիշեալ գիսաւորն երկու շրջանակաց (Երկրիս և Տեմպելի) հասանող հասարակաց կէտին վրայ հասնի, Երկիրս դեռ աւելի հեռացած պիտի գտնուի՝ քան որչափ գտնուեր էր 1866ին մէջ:

« Սակայն համարելով որ՝ սպառաչային մէջ գէթ անգամ մի՛ Երկրիս և Գիսաւորն իրարու հանդիպին՝ երկու շրջանակաց հասման հասարակաց կէտին վրայ, որով և ընդհաւրումն ունենան, այսու հանդերձ՝ մեր գիսաւորաց վրայ ունեցած գիտութեամբ՝ կը կարծենք որ ահաւոր հետևանքներ յառաջ չգան, գէթ Երկրիս ամբողջութեան վրայ մըտածելով: Վասն զի շատ հաւանական է որ գիսաւորն այ ուրիշ բան չէ՝ բայց եթէ փոքրիկ մարմիններէ բաղկացեալ կեդրոնական խումբ մի, որք աւելի խիտ կերպով իրարու հետ շաղկապուած են և քան զամպամածն կազմող փոքրիկ մարմիններն աւելի մեծկակ են: Հետևաբար, որ և իցէ ժամանակ, եթէ մենք գիսաւորի մը խտացեալ մասին հետ ընդհարումն ունենանք, ուրիշ բան պիտի չի հետևի՝ բայց եթէ մթնոլորտի մէջ բարձրէն թռչող սասեղաց գեղեցիկ տեսարանին տեղ՝ պիտի տեսնենք բազմաթիւ երկնաքարեր, որք Երկրիս մօտէն անցնելով՝ մասամբ մի անձրեւանման պիտի թափափին Երկրիս վրայ, որք զուցէ թէ առանձինն գաւառներու մէջ յառաջ բերեն աւերմունք և հրդեհներ, ինչպէս որ ամենաբիշ անգամ անցելոյն մէջ տեղի ունեցեր է: Այդ աւերաժք և հրդեհներ զուցէ այնքան փնասու պատճառք չլինին, քան որչափ տարուէ տարի երկրիս վըրայ երևցած փոթորիկը և աղիտարեր թաթառք և ողորմունք:— Աւտի բնաւ պատճառ չկայ՝ որ բովանդակ մարդկութիւնն այդ բանին համար տարիներով կասկածանաց և ահուգողի մէջ ապրի »:

ինչպէս 'ի սկզբանէ ըսինք՝ դարձեալ կը կրկնենք. իրաւ է՝ որ աշխարհիս վերջը պիտի հասնի, բայց ոչ ոք կարող պիտի լինի որոշել նորա ժամանակը... զուցէ վաղ... զուցէ հազարամեր դարերէ վերջը: Պետրոս Առաքելոյն խօսքերն են (Թուղթ Բ. Գլ. Գ. 10, 13). Բայց Աստուծոյ օրը պիտի գայ գողի նման, երբ երկինք տաքնալով անցնին, և բնութիւնը կրակով այրուելով լուծուի, և թէ երկրիս վրայ եղած բաները... Եւ երբոր այս ամէն բաներն այսպէս լուծուին... Նոր Երկնքի և Նոր Երկրի՝ աւետեաց համաձայն՝ կը սպասենք, որոց մէջ արգասութիւնն կը բնակի »:

Երկնային մարմնոյ մի յանակնկալ տեսչափաւթիւնն՝ կրնայ իւր անկման ժամանակ՝ գահավիժել զմեզ յաւիտեանական սահմանաց գերասահման անշուշեղներուն մէջ:

Գուցէ Հերակլեսի Համաստեղութիւնն, որ զմեզ առ ինքն կը քարէ իւր կեդրոնաձիգ զօրութեամբ, բռնաբատէ մեր արեւային դրութիւնը իրեն երկնային սահմանաց մէջ թափառելու:

Աւելի ևս հաւանական է՝ որ երկիրս շինի. արևն իւր լոյսն ու ջերմութիւնը կորսընցընէ. դալարութիւնն անհետանայ երկրիս երեսէն, շքանան մարդիկ և կենդանիք, և մշտնջենաւոր ձիւնն ու սառն ամէն բան շրջապատէ. և երկրագունեսս՝ անհուն գերզմանի նման՝ թափառական լուռուժու շրջի անծիւր անվայրափակ տարածութեան մէջ, մինչև որ ուրիշ սասեղ մի շրջանէն ձգուելով առ նա՝ դարձեալ շերմանայ և հրաբորբոք վիճակի դառնայ՝ իւր նախկին օրերուն պէս, դարձեալ նորա պաղած երեք զարդարեն բոյք և կենդանիք, դարձեալ նորա վրան Աստուած մարդը կամ բանաւոր էակ մի ստեղծագործէ, և դարձեալ սկսին բուրմունք և սէր և արտասուք:

\*\*\*



ԲԱՆՏՏՐՈՒԹԻՒՆ ՄԻ

ՄԱՐ ԱՐԱՍԱՅ ԳԻՒՏԻՆ ՄԱՍԻՆ



Մը Աքսոսայ Կազէտոյոյ Ժամանակագրութեան ասորի բնագրին հատակագրութեան պիտան՝ օրուան խնդիրն է ներկայացուցիչ հայազէտ և հայազգի բանասիրաց մէջ, և այնքան